

Նութիւնը, բարուականութիւնը և ար-
 ւեստը: Ամբողջ մարդը պէտք է հաս-
 կացի իւր բնական և հոգեկան
 կեանքով որպէս մի միութիւն: Դո-
 րա քննադատութեան եղանակից իս-
 կոյն երևում է Հեղելի խորը ազդե-
 ցութիւնը հեղինակի վերաջ, թէպէտ
 և նա իւր ուսուցչի ստրուկ եր-
 կըրպագուն չէ, այլ նորանից ան-

գամ վեր է ուղում բարձրանալ:
 Գրւածքը պարունակում է բազմա-
 թիւ շատ աջողած մանրամասնու-
 թիւններ. մանաւանդ ով ծանօթ է
 Շաղլերի էսթետիկական գրւածքնե-
 րի հետ, գեղարւեստին վերաբերեալ
 հատւածը շատ կը գնահատէ: Այդ
 հատւածը պարունակում է ճուրբ
 նկատողութիւններ:

ՏՐՕՅԲԵՐ, Դ.Ր. ՕՍԿԱՐ, պրօֆ., ԼԻԿԵԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ: Հ. Կիպեր-
 տի մի քարտէզով: Նոտուտգարտ. 1887, Kohlhammer. (XII+247
 էրես, մեծ ութածալ):

Փոքր ասիական թերակղզին,
 թէպէտև հնումը բնակավայր էր
 շատ ազդերի, ունեցաւ սակաջն հին
 դարերի մեծագոյն շրջանում մի
 պատմութիւն, սկսած պարսիկների
 նւաճումից մինչ Ալէքսանդր Մեծի
 չաջորդները և Հռովմի նւաճելուց
 մինչ Օսմանցոց գալը: Բայց նախ
 քան այդ պատմութեան գրելը,

պէտք են պատրաստական մասնա-
 ւոր աշխատութիւններ: Մի աղպի-
 սի աշխատութիւն տալիս է հեղինա-
 կը Լիկիացոց մասին, որոնց պատ-
 մութեան համար հեղինակը իւր 20-
 ամեայ ուսուցչութեան ազատ ժա-
 մերը գործ է դրել նիւթեր հաւաքե-
 լու: Գործը կատարւած է օրինակելի
 բարեխղճութեամբ:

ՇՄԻԿՏ, Դ.Ր. ԷՄԻԼ, դօցնետ, ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՕԴԻՆԵՐ: Ուղե-
 ցոյց դիտելու ու ժողովելու գործանոցի և ճանապարհորդութեան
 համար: Բազմաթիւ նկարներով բնագրի մէջ: Լայպցիգ, 1888 թ.,
 տպարան Veitet (IV+336 էր. imp. 12), գինը՝ 6 մարկ: (Գեր-
 մաներէն):

Այս գիրքը հմուտ մարդիկ խորհուրդ
 են տալիս ձեռք բերելու նորան, ով
 մարդաբանական (անթրօպօլօգիա-

կան) հետազոտութիւններով է զբաղ-
 ւած կամ ով դոցա համար նիւթեր
 է ժողովում: Հեղինակը ինքը մի

Նշանաւոր մասնագէտ է և քաջ տեղեակ գործին վերաբերեալ գրականութեան: Ազգային կատարեալ գրածք չը կալ ոչ գերմանական և ոչ մի օտար գրականութեան մէջ: Ի՞նչ բան և ի՞նչպէս պէտք է գիտել կենդանի մարդու թէ մեռածի վերայ—ահա՛ առաջադրած խնդիրը: Գիրքը պարզ կերպով ծանօթացնում է գործիքներին, որոնցով պէտք է չափել, և չափելու մեթոդներին հետ ահպէս, որ մասնագէտը բաւական է մնում, իսկ ոչ մասնագէտը հմտանում է գործին, եթէ միայն անատօմիական անուններին ծանօթ է:

Տ. Գ.

ՄԵՐԿԵԼ, ԴՐ. ՅՈՎ. Հ., ՊՐՕՖ., ՈՒՍԻԱԾՔՆԵՐ ՀՈՌՎԱԼՄԷԱԿԱՆ ԻՐԱԻՈՒՆՔԻՅ: Տեար III. Հռովմէական ծառայողների ոռնիկների ծագման և հռովմէական դատարանական վճարումների մասին: Հալլէ Զալի վերայ. 1888 թ., տպ. Նիմայէր, 174 էր., մեծ ութածալ, գինը՝ 4 մարկ:

Հատած I-ում խօսում է հանրապետական ժամանակի մասին (ռոնիկներ քահանաներին, դինւորներին, ապագարխտօրներին և գաւառական դատաւորներին): Հատած II-ում՝ Պզոտոսի և Նորա լաջորդների կարգա-

դրութիւնների մասին: Հատած III-ը տալիս է մի տեսութիւն ծառայողների ոռնիկների պայմանների մասին Գիւօկլիտիանոսից մինչ Յուստինիանոս:

Ա.

ՔՐՈՒԽՄԱՆ, ԴՐ. ԿՈՒՐՏ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՍԻԱԾՔՆԵՐ ԼԵԶՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ: Լայպցիգ, 1888 թ., տպ. Ֆրիդրիխ, X+358 էրես, մեծ ութածալ, գինը՝ 9 մարկ:

Գիրքը ունի չարաբերութիւն լեզուադիտութեան, հոգեբանութեան, բանաստեղծութեան և գրական պատմութեան հետ: Լեզուն շատ ծանր է, նիւթերի դասաւորութիւնը՝ խառն: Ի միջի աւելց հետաքրքրական օրինակներ են բերւած, թէ ինչպէս իմաստից զուրկ բառեր լեզուի մէջ

գործ են ածուած, հէնց որովհետեւ լեզուն նոցա պահպանած է: Մանաւանդ հետաքրքրելին այն մասն է, որտեղ դժապրում է Հին-կտակարանի աղղեցութիւնը կրօնական բանաստեղծութեան լեզուի վերայ մինչ մեր օրերը:

Ա.